Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020թ. փետրվարի 28-ի թիվ 195-Ա հրամանի

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N11065/2021/ԿՈՒՎ4/Ա

Ք. Երևան

18.03.2021
Կազմման ամսաթիվ

1. **ԱՎԱԳ ՎԱՀԱՆԻ ՍԱՄՎԵԼՅԱՆ** **ՀՎՀՀ 82596119**
   (հարկային իրավախախտումը կատարած անձի անունը, ազգանունը)

2. **ԱՏԱՐԱՍ, ԴԻՄԻՏՐՈՎ, ՇԱՄԻՐԱՄԻ Փ., 33Տ**
   (բնակության (գտնվելու վայրի) հասցեն

3. **2408820936**
   (ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և/կամ/ հանրային ծառայությունների համարանիշը)

4. **Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել.**

ՀՀ կադաստրի կոմիտեից ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1337-Ն որոշմամբ ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ 13.08.2018 թվականին ֆիզիկական անձ Ավագ Սամվելյանի կողմից «ՕՏԱՐՈՖՖ» ՍՊԸ -ի (ՀՎՀՀ 04231023) կանոնադրական կապիտալում իրականացվել է *Մարզ Արարատ, համայնք Դիմիտրով Շամիրամի փողոց 48 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի ներդրման գործարք, որի պայմանագրային արժեքը կազմել է 7,540,000 ՀՀ դրամ* (հողամասի (0,13 հա) կադաստրային արժեքը՝ 293,800 ՀՀ դրամ և շինության (61.12 քմ) կադաստրային արժեքը՝ 831,295 ՀՀ դրամ):

ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային համակարգի /e-register.am/ տվյալների՝ 26.11.2019 թվականին օտարվել է վերոնշյալ ընկերությունում ֆիզիկական անձին պատկանող 100% բաժնեմասը:

ՀՀ հարկային օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ֆիզիկական անձի ստացած եկամուտները չեն համարվում նվազեցվող, եթե ստացվում են կազմակերպության կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)) ձևով մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից, եթե այդ օտարումը կատարվում է կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում այդ մասնակցությունը (բաժնետոմսը, բաժնեմասը, փայաբաժինը) ձեռք բերելու օրը ներառող հարկային տարվա կամ դրան հաջորդող երեք հարկային տարիների ընթացքում:

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն՝ օրենսգրքի 149-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքերում կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում շենքի, բնակարանի, առանձնատան կամ այլ շինության (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց) ձևով մասնակցության (բաժնետոմսի, բաժնեմասի, փայաբաժնի) կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից ստացվող եկամուտների մասով եկամտային հարկը հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով (01.01.2020 թվականից 10%):

Օրենսգրքի 140-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձը հանդիսանալով եկամտային հարկ վճարող, Օրենսգրքի 156-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն պարտավոր էր մինչև 2020 թվականի ապրիլի 20-ը ներառյալ Օրենսգրքի 53-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ներկայացնել Օրենսգրքի 151-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված եկամուտների մասով 2019 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկ և վճարեր դրա արդյունքում առաջացող հարկային պարտավորությունների գումարը՝ համաձայն Օրենսգրքի 158-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի:

Հաշվի առնելով վերոգրյալը հայտնում ենք, որ ֆիզիկական անձի կողմից չի ներկայացվել 2019 թվականի եկամտային հարկի և սոցիալական վճարի տարեկան հաշվարկը և չի կատարվել համապատասխան վճարումները:

Հիմք ընդունելով Օրենսգրքի 15-րդ հոդվածով 3-րդ մասին համապատասխան սահմանված տեսակարար կշիռների մեթոդը՝ ֆիզիկական անձի հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ ձևով.

Ֆիզիկական անձ Ավագ Սամվելյանի կողմից մարզ Արարատ, համայնք Դիմիտրով Շամիրամի փողոց 48 բնակելի տուն հասցեում ներդրված անշարժ գույքի հողի հարկման նպատակով հողամասի կադաստրային արժեքը կազմում է 293,800 ՀՀ դրամ, իսկ գույքահարկի հաշվարկման նպատակով շինության կադաստրային արժեքը՝ 831,295 ՀՀ դրամ: Օտարված գույքի ընդհանուր կադաստրային արժեքը կազմում է 1,125,095 ՀՀ դրամ (831,295+293,800): Շինության տեսակարար կշիռը ընդհանուր կադաստրային արժեքի մեջ կազմում է **73,8%** (831,295/1,125,095*100): Մարզ Արարատ, համայնք Դիմիտրով Շամիրամի փողոց 48 բնակելի տուն հասցեում գտնվող անշարժ գույքի ներդրման պայմանագրի համաձայն՝ ներդրված անշարժ գույքի պայմանագրային արժեքը կազմում է 7,540,000 ՀՀ դրամ: Նշված գործարքից եկամտային հարկով հարկման բազան կկազմի **5,564,520** ՀՀ դրամ (7,540,000*73,8%), որից եկամտային հարկը կհաշվարկվի **1,112,904** ՀՀ դրամ (5,564,520*20%):

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալը) վճարում է տույժ՝ **147,794** ՀՀ դրամ (1,112,904*332օր*0,04%):

Այսպիսով եկամտային հարկի գծով ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունները կկազմեն **1,260,698** ՀՀ դրամ, որից հարկ՝ 1,112,904 ՀՀ դրամ, տույժ՝ 147,794 ՀՀ դրամ:

Հարկման բազա	Եկամտային հարկ	Օրենսգրքի 401-րդ հոդվածով հաշվարկված տույժ	Ընդամենը
5,564,520	1,112,904	147,794	1,260,698

Միաժամանակ տեղեկացվում է, որ հարկային պարտավորությունները հաշվարկվել են 18.03.2021 թվականի դրությամբ և ենթակա են վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

6.Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող

ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը:

7.Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը.

ՀՀ ՊԵԿ ՀՏ և ՌՎ վարչության կամերալ ուսումնասիրությունների
և վերլուծության թիվ 4 բաժնի գլխավոր հ/տ **Հ. Ավետիսյան**